



Մամուլի հաղորդագրություն

12-ը հունիսի 2010թ.

Մայրաքաղաք Երևանի հարավ-արևելյան արվարձանում, վեր բարձրացող Արին-բերդ բլրին և դրա շուրջն է հիմնադրվել ուրարտական Էրեբունի քաղաքը: Դեռևս 1879-ին բլրի ստորոտից հայտնաբերված 1-ին սեպագիրը, այնուհետև ռուս հնագետ Ա. Ա. Իվանովսկու ուսումնասիրությունները միանշանակ ձևավորեցին մասնագիտական հետաքրքրություն հնավայրի նկատմամբ, իսկ 1950-ին հայտնաբերված Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունը հիմք հանդիսացավ պարբերական գիտական ուսումնասիրությունների համար, որոնք սկսվեցին 1952 թվականից: Միջնաբերդի տարածքից գտնված 23 սեպագիր արձանագրություններից 2-ը պատմում են մ. թ. ա. 782թ. Արգիշտի Ա-ի կողմից Էրեբունի քաղաքի հիմնադրման մասին՝ հաստատելով դեռևս Վանի տարեգրությունից հայտնի տեղեկությունը քաղաքի հիմնադրման մասին, ինչպես նաև լույս են սփռում Արին-բերդի շրջակայքում Էրեբունի տեղադրության մանրամասների վերաբերյալ: Այդ արձանագրությունը, որ ընդունված է համարել Երևան քաղաքի ծննդյան վկայականը, թույլ է տալիս մեր մայրաքաղաքը դասել եվրոպական հնագույն մայրաքաղաքների շարքում՝ 29 տարով ավագ «հավերժական քաղաք» Հռոմից /հիմնադրված մ. թ. ա. 753թ.՝ ըստ ավանդության/:

1950-ականներին մեկնարկված և գրեթե 3 տասնամյակ շարունակվող պեղումները բացեցին Էրեբունի քաղաքի հատակագծում եռանկյունաձև միջնաբերդը՝ Խալդի աստծո մոնումենտալ տաճարով, Արգիշտի Ա-ի պալատական կառույցով, Սուսի տաճարով և տնտեսական նշանակության շենքերով: Ու թեև ուրարտագիտության մեջ ընդունված է Ուրարտուի տարածք համարել Վան քաղաքի շրջակայքը, Էրեբունիի հզոր բերդապարիսպներով ամրացված միջնաբերդը փաստեց, որ Վանի շրջանից հետո Էրեբունին է հանդիսացել այդ պետության ռազմավարական հզոր հենակետերից մեկը Արարատյան հարթավայրում և պաշտպանել է երկրի հյուսիսային սահմանները: Պեղումները բացահայտեցին ուրարտական մշակույթի բազմազանությունը բնութագրող հարուստ հնագիտական նյութ՝ Ուրարտուի տնտեսության, կերպարվեստի ու քաղաքաշինության, մասնավորապես ամրաշինական, պաշտամունաքային ու պալատական ճարտարապետության, շինարվեստի, խեցեգործության և այլնի վերաբերյալ:

2008 թվականից «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը գիտական և տեխնիկական համգործակցություն է իրականացնում ֆրանսիացի մասնագետների հետ՝ նպատակ ունենալով նպաստել հնավայրի գիտական ճանաչման ընդլայնմանը, հայտնաբերված ու դեռևս հայտնաբերման ենթակա մնացորդների անվտանգ պահպանությանը, հնավայրի հանրահռչակմանը, ինչպես նաև մշակութային այլ մտահաղացումներին: Այս համագործակցության առանցքում դրված են նաև հնավայրի

ուսումնասիրության պատմությանը վերաբերող փաստավավերագրական նյութի ամբողջացումը և գիտակրթական նշանակության կարևորումը, մասնավորապես մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին պեղումների գործաշրջանին ներգրավման միջոցով:

2010թ. հունիսի 7-18-ը Էրեբունի միջնաբերդում հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբերի աշխատանքը կամփոփեն «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը, հայ-ֆրանսիական արշավախմբի հայկական կողմի ղեկավար հնագետ Աշոտ Փիլիպոսյանը և Ֆրանսիական կողմի ղեկավար Ստեֆան Դեշամը: Ասուլիսը տեղի կունենա 2010թ. հունիսի 15-ին ժամը 12:00-ին՝ «Էրեբունի» արգելոց-թանգարանում /ք. Երևան, Էրեբունու փող. 38, հեռ..՝ 43 26 61 և 43 89 53/:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան